



PEARLS OF ARMENIAN HERITAGE

Ղազարոս Աղայեան (1840 – 1911)

Ծնած է Թիֆլիսի մօտ՝ Խաչէն գիւղը: Ըստ իր ինքնակենսագրութեան (“*Իմ կանքի գլխաւոր դէպքերը*”, Թիֆլիս, 1893) հօրենական տունէն կը վտարուի իր անառակութեան համար, եւ բախտը կը բերէ որ տարի մը Թիֆլիսի Ներսէսեան վարժարանը յաճախէ, ուր ընկերակից կ’ունենայ Պոռտեանց:

Եօթ տարիներ կը թափառի հեռու հայրենի տունէն, եւ կ’աշխատի իբր գրաշար՝ օրապահիկը շահելու համար: Այս շրջանին կը գրէ *Արութիւն եւ Մանուէլ* (1867) վիպակը, որ իր մանկութիւնն ու պատանեկութիւնը կը պատկերացնէ: Ատեն մը կը զբաղի նաեւ ուսուցչութեամբ, եւ կը պատրաստէ հայերէն լեզուի դասագիրքեր, անոնց մէջ մանկական ոտանաւորներ հրատարակելով:

Ունի նաեւ երկու վէպեր, *Սէրը արտաքսուած* եւ *Երկու քոյրեր*, ուր կու տայ գեղջուկ միջավայրերու նկարագրութիւններ, սիրային արկածախնդրութիւններ՝ լի ճակատագրական ողբերգութեամբ:

Աղայեան հեղինակած է մանկական հէքեաթներ լեզուի եւ ոճի միամիտ պարզութեամբ. այսպէս՝ *Տորք Անգեղ, Անահիպ, Արեգնազան, Քէօր Օղլու*:

Պոռտեանցի նման, Աղայեան եւս սահմանափակուած է գիւղական կեանքին մէջ, նոյնպէս ծանրաբեռնելով իր պատմութիւնը ազգագրական ծանօթութիւններով. բայց իբրեւ պատմող Պոռտեանցէ աւելի շնորհալի եւ աշխոյժ է իր արտայայտութեան ոճին մէջ:

(Քաղուած Հ. Մետրոպ Վրդ. Ճանաչեանի “Հայ Գրականութեան Նոր Շրջանի Համառօտ Պատմութիւն” հատորէն)

